

# Հարկարյուցետային քաղաքականության ներառականության գնահատման մեթոդաբանական մոտեցումները<sup>1</sup>

**Աղաբեկյան Էդգար Վ.**

*տ.գ.թ., դոցենտ, Ֆինանսների ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0002-4194-5495>

[eaghabekyan@gmail.com](mailto:eaghabekyan@gmail.com)

**Մեղրունյան Հովհաննես Հ.**

*տ.գ.թ., դասախոս, Միջազգային Տնտեսական Հարաբերությունների ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0003-3597-8079>

[hovhannemelkumyan@paara.am](mailto:hovhannemelkumyan@paara.am)

**Սարաֆյան Լուիզա Հ.**


*ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0002-4966-5076>

[luiza.asue.97@gmail.com](mailto:luiza.asue.97@gmail.com)

**Դավթյան Կամո Ա.**

*ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-8063-5548>

[davtyankamo1997@gmail.com](mailto:davtyankamo1997@gmail.com)

**ՀՏԳ՝ 338.2; EDN: FZVQAD; JEL: O23**

**DOI: 10.58587/18292437-2024.4-174**

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** հարկարյուցետային քաղաքականություն, ներառականություն, պետական եկամուտներ, պետական ծախսեր, կենսամակարդակ, ցուցանիշներ, գնահատման մեթոդներ

## **Методологические подходы к оценке инклюзивности бюджетной политики**

**Աղաբեկյան Էդգար Վ.**

*к. э. н., доцент кафедры финансов, АГЭУ (Ереван, РА)*

**Մելքումյան Օգանես Ա.**

*к.э.н., преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ (Ереван, РА)*

**Տարաֆյան Լուիզա Գ.**

*соискатель кафедры финансового учета, АГЭУ(Ереван,РА)*

**Դավթյան Կամո Ա.**

*аспирант кафедры экономико-математических методов АГЭУ (Ереван, РА)*

**Аннотация:** Идея инклюзивности экономического развития стала одним из основных ориентиров разработчиков и реализов экономической политики многих стран мира. Вопросы, связанные с инклюзивностью, делают их комплексное исследование актуальным и актуальным. В последнее время большое внимание к проблемам обеспечения инклюзивности экономической политики связано с глобализацией и технологическими изменениями. Последние обладают потенциалом значительно улучшить качество жизни домохозяйств и способствовать сокращению бедности в некоторых развивающихся странах. С другой стороны, экономический и финансовый кризисы, как следствие их, перекосы в экономической и социальной сферах делают неизбежными изменения в подходах к исследованиям и управлению.

Таким образом, количественная оценка инклюзивности налогово-бюджетной политики является необходимостью, поскольку она дает ценную информацию об эффективном распределении финансовых ресурсов государства. С другой стороны, оценка инклюзивности налогово-бюджетной политики может служить ориентиром в процессе разработки налогово-бюджетной политики.

Отдельные авторы в своих исследованиях подходят к проблемам с разных позиций, используют разные группы рассматриваемых факторов, используют разные методы исследования. Цель исследования – интерпретация и обобщенное изложение методологических подходов к оценке инклюзивности фискальной политики, обсуждаемых на профессиональных площадках и в литературе. Путем сравнения преимуществ и недостатков методов оценки были выделены приемлемые подходы к оценке инклюзивности фискальной политики для Республики Армения.

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «Հարկարյուցետային քաղաքականության ներառականության ասպահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակներում:

**Ключевые слова и словосочетания:** фискальная политика, инклюзивность, государственные доходы, государственные расходы, уровень жизни, показатели, методы оценки

**Methodological approaches to assessing the inclusiveness of fiscal policy**

*Aghabekyan Edgar V.*

*PhD in Economics, Associate Professor of the Chair of Finance, ASUE (Yerevan, RA)*

*Melkumyan Hovhannes H.*

*PhD in Economics, lecturer of the Chair of International Economic Relations, ASUE (Yerevan, RA)*

*Sarafyan Luiza H.*

*Applicant for the Department of Financial Accounting, ASUE (Yerevan, RA)*

*Davtyan Kamo A.*

*PhD student of the Economic and Mathematical Methods Chair of the ASUE (Yerevan, RA)*

**Abstract.** The idea of inclusiveness of economic development has become one of the main guidelines for developers and implementers of economic policies in many countries of the world. Issues related to inclusiveness make their comprehensive study relevant and topical. Recently, much attention to the problems of ensuring the inclusiveness of economic policy is associated with globalisation and technological change. The latter have the potential to significantly improve the quality of life of households and contribute to poverty reduction in some developing countries. On the other hand, the economic and financial crises and the resulting economic and social distortions make changes in research and management approaches inevitable.

Thus, quantifying the inclusiveness of fiscal policy is a necessity as it provides valuable information on the efficient allocation of a state's financial resources. On the other hand, assessing the inclusiveness of fiscal policy can serve as a benchmark in the process of fiscal policy formulation.

Individual authors in their studies approach the problems from different positions, use different groups of factors under consideration, use different research methods. The purpose of the study is to interpret and summarise the methodological approaches to assessing the inclusiveness of fiscal policy discussed in professional platforms and in the literature. By comparing the advantages and disadvantages of the evaluation methods, acceptable approaches to assessing fiscal policy inclusiveness for the Republic of Armenia were identified.

**Keywords & phrases:** fiscal policy, inclusiveness, public revenues, public expenditures, living standards, indicators, evaluation methods

**Ներածություն**

ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ներառականության գնահատումը, հիմնական գործոնների և գնահատման նպատակահարմար մեթոդների առանձնացումը անհրաժեշտ են ներառականությանը խոչընդոտող գործոնների բացահայտման ու խոչընդոտների հաղթահարման որոշ ուղիների մատնանշման տեսանկյունից, ինչը կարևոր է տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար: Գնահատման համար կարևոր են մեթոդաբանական մոտեցումների մեկնաբանումը և առանձնահատկությունների շեշտադրումը, գնահատման ցուցանիշների համախմբի հստակեցումը:

Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության գնահատման համար կիրառվում են տարբեր մեթոդաբանական մոտեցումներ: Գնահատման մեթոդաբանական մոտեցման ընտրությունը կախված է հետազոտության նպատակից, խնդիրներից, երկրի զարգացման մակարդակից, ինչպես նաև օգտագործման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների հասանելիությունից: Կարևոր է հարկաբյուջետային քաղաքականության ներառականության գնահատումը ոչ միայն մակրոմակարդակում, այլև միկրոմակարդակում՝ ներառելով հարկա-

բյուջետային քաղաքականության ներառականությունն ապահովող միջանկյալ գործոնները, քանի որ համապարփակ գնահատական հնարավորությունը ավելի թիրախային կղարձնի երկրում վարվող հարկաբյուջետային քաղաքականությունը: Հոդվածի նպատակն է հարկաբյուջետային քաղաքականության ներառականության հետազոտման միջազգային փորձի հիման վրա բացահայտել կիրառվող հիմնական վերլուծական մեթոդները և վերլուծության գործոնների շրջանակը:

**Հետազոտության արդյունքներ և քննարկում**

Մասնագիտական գրականության մեջ հարկաբյուջետային քաղաքականության ներառականության կարևորության և գնահատման հիմնահարցերը լայնորեն քննարկվել են տնտեսագետների կողմից և՛ տեսական և՛ էմպիրիկ ուսումնասիրություններում:

Ավելի ու Կոլիոն հարկաբյուջետային քաղաքականության և անհավասարության փոխհարաբերությանը նվիրված իրենց հետազոտությունում անդրադառնում են պետական եկամուտների ու ծախսերի ազդեցությանը եկամուտների բաշխման վրա [9]: Հետազոտությունն իրականացվել է 31 եվրոպական երկրների համար 1995-2019 թթ. տվյալների հիման վրա:

Գնահատվել է տնտեսական աճի, անհավասարության և հարկաբյուջետային քաղաքականության փոփոխականների միջև կապը: Հեղինակները եզրակացնում են, որ չնայած, տնօրինվող եկամտի անհավասարությունը բացասաբար է ազդում հարկաբյուջետային քաղաքականության բոլոր փոփոխականների վրա, համախառն եկամուտների անհավասարությունը որոշ երկրներում դրական ազդեցություն է ունեցել: Արևելյան Եվրոպայի երկրներում պետական սպառումը և ուղղակի հարկումը, տնօրինվող և համախառն եկամտի անհավասարությունը դրական ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, իսկ Արևմտյան Եվրոպայի երկրներում ազդեցությունը բացասական է: Բացի այդ, հեղինակները արձանագրում են, որ տնտեսական աճը խորացնում է Արևելյան Եվրոպայի երկրներում տնօրինվող և համախառն եկամուտների անհավասարությունը, մինչդեռ Արևմտյան Եվրոպայի երկրներում ազդեցությունը հակառակն է: Հեղինակները նշում են, որ հարկաբյուջետային քաղաքականությունն օգնում է նվազեցնել տնօրինվող եկամուտների անհավասարությունը, ինչպես նաև պրոգրեսիվ հարկումը կարևոր գործոն է և այն պետք է հաշվի առնել անհավասարության, հարկաբյուջետային քաղաքականության և աճի միջև եռաչափ կապը վերլուծելիս:

Մ. Գալլոն և Ռ. Մազալեսն իրենց հետազոտությունում վերլուծում են եկամուտների անհավասարության և տնտեսական աճի միջև հարաբերությունները հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ [15]: Հեղինակները ներկայացնում և գնահատում են կառուցվածքային հավասարումների երկու համակարգեր, որոնց միջոցով համախառն եկամտի անհավասարությունը որոշում է հարկաբյուջետային քաղաքականության տարբեր արդյունքներ, որոնք հետագայում ազդում են տնտեսական աճի և զուտ եկամուտների անհավասարության վրա: Էմպիրիկ արդյունքները, որոնք ստացվել են 1972–2006 թթ. ընթացքում SՀԶԿ բարձր եկամուտ ունեցող 21 երկրների պանելային տվյալների հիման վրա, ցույց են տալիս, որ համախառն եկամտի անհավասարությունը հարկաբյուջետային քաղաքականության արդյունքների էական որոշիչն է: Բացի այդ, արդյունքները ցույց են տալիս, որ բաշխիչ ծախսերը և ուղղակի հարկերը կարող են զգալի կրճատել ՀՆԱ-ի աճի և զուտ եկամտի անհավասարությունը՝ արտացոլելով հարկաբյուջետային քաղաքականության որոշակի միջոցառումների արդյունավետությունը: Արդյունքները փաստում են նաև այն, որ հարկաբյուջետային քաղաքականության ամենահամարժեք ռազմավարությունը հարկաբյուջետային համախմբման համատեքստում ոչ բաշխիչ ծախսերի կրճատումն է,

քանի որ դա կարող է մեծացնել ՀՆԱ-ի աճը՝ միաժամանակ նվազեցնելով եկամուտների անհավասարությունը:

Ա. Էրեն և Մ. Դիբոն վերլուծել են ուղղակի հարկումից հետո եկամտի անհավասարության ազդեցությունը համախառն ներքին արդյունքի վրա [5]: Ուղղակի հարկումը նրանց կողմից դիտարկվել է որպես հարկաբյուջետային քաղաքականության գործիքների հիմնական ուղղություն: Ուսումնասիրությունը հիմնված է Մ. Գալլոնի և Ռ. Մազալեսի հետազոտության վրա [15]: Ուղղակի հարկման ներքո եկամտի անհավասարության և համախառն ներքին արտադրության միջև կապը վերլուծելու և գնահատման համար կիրառվել է երկու մոդել՝ օգտագործելով ավտոռեգրեսիվ բաշխված լագերի (Autoregressive Distributed Lag (ARDL)) մոդելը որոշ զարգացող շուկայական տնտեսությունների համար: Արդյունքները ցույց են տալիս որոշ երկրներում նշված փոփոխականների միջև բացասական երկարաժամկետ կապի առկայություն, ինչը համահունչ է գրականության մեջ ընդունված տեսակետներին: Ուղղակի հարկումից հետո եկամտի անհավասարության առկայությունը բացասական ազդեցություն ունի համախառն ներքին արդյունք վրա: Հեղինակները նշում են, որ եկամուտների բաշխման ավելի արդար սկզբունքների կիրառումը կարող է դրականորեն ազդել համախառն ներքին արդյունքի վրա:

Ս. Վալբերտին, Յ. Գիորգիոսը և Լ. Մատոսը հիմնվելով հարկաբյուջետային քաղաքականության, անհավասարության և աճը կապող մոդելների վրա, առաջ են քաշում մի քանի խնդիրներ [19]: Վերաբաշխիչ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա արտացոլող մոդելի կառուցմամբ նախ փորձում են բացահայտել, ամբողջական եկամուտների անհավասարության վրա հարկման ազդեցությունը՝ հաշվի առնելով կապիտալի սկզբնական բաշխումը: Առաջարկված մոդելը նորոգասական աճի հիմնական մոդելի մրցակցային հավասարակշռության տարբերակն է, որը էնդոգեն կերպով հաշվի է առնում եկամտի անհավասարությունը և գործակալների՝ աղքատ - հարուստ տարասեռությունը, ինչը թույլ է տալիս դիտարկել առաջ քաշված խնդիրները դինամիկայի մեջ: Օգտագործվում է Ռեմսիի խնդիրը՝ որոշելու երեք տեսակի հաստատագրված հարկերի՝ կապիտալի, եկամտի և սպառման, օպտիմալ հաջորդականությունը ոչ ստոխաստիկ միջավայրում: Հեղինակներն առաջարկում են կառավարման հետևյալ մոդելը. կայուն վիճակում կապիտալի օպտիմալ հարկը միշտ պետք է լինի զրոյական՝ անկախ կոնկրետ գործակալների նկատմամբ կառավարության բարեհաճությունից: Կառավարությունը պետք է նաև ֆինանսավորի աղքատ

գործակալներին տրվող տրանսֆերտները՝ օգտագործելով սպառման և աշխատանքային եկամտի վրա հարկերի տարբեր համակցությունները:

Հանրային ծախսերի ոլորտում Համաշխարհային Բանկի կողմից կատարված ուսումնասիրությունում դիտարկվում է Կոմորյան կղզիների հարկաբյուջետային քաղաքականությունը ներառական աճի ապահովման տեսանկյունից [3]: Հիմնական դիտարկումները կատարվում են հանրային ֆինանսական կառավարման ոլորտի բարելավման, ներքին ռեսուրսների կենտրոնացման, առողջապահական ծախսերի արդյունավետության բարձրացման և կլիմայի փոփոխության և աղետների ռիսկերի կառավարման ուղղությամբ: Ըստ առաջարկությունների՝ պետական ներդրումների ավելի լավ կառավարման միջոցով պետական ծախսերի արդյունավետության բարելավումը կարող է առաջացնել 0,03-ից 0,15 տոկոսային կետ հավելյալ ՀՆԱ-ի աճ 2022-2050 թվականներին, իսկ պետական ֆինանսական կառավարման հատուկ բարեփոխումները կարող են օգնել բարձրացնել հարկաբյուջետային արդյունավետությունը՝ ՀՆԱ աճը դարձնելով 0,27%-ից մինչև 1,76%: Հետազոտությունը նաև կենտրոնանում է առողջապահության ոլորտում հնարավոր բարեփոխումների և աղետների ռիսկերի կառավարման վրա: Այս ոլորտներում բարեփոխումները կարող են բարելավել հանրային ծառայությունների մատուցումը և ապահովել ներառական աճ՝ օգնելով նվազեցնել երկրի փխրունությունը:

Ասիական զարգացման բանկի մասնագետների կողմից կատարված հետազոտությունում կարևորում են ավելի ներառական աճի հասնելու համար հարկաբյուջետային կայունության պահպանմամբ հարկաբյուջետային քաղաքականության դերն մեծացումը [11]: Ըստ ուսումնասիրությունների, տնտեսական աճին զուգահեռ տարածաշրջանում անհավասարությունը կտրուկ աճում է: Չարգացող Ասիան հետ է մնում մնացած աշխարհից հավասարությանը նպաստող այնպիսի բյուջետային ծախսերի առումով, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և սոցիալական պաշտպանությունը: Հեղինակները պնդում են նաև, որ առանց հարկաբյուջետային ռեսուրսների ավելացման պետական ծախսերի ընդլայնումը կարող է վտանգել հարկաբյուջետային կայունությունը:

Ս. Համմեդը, Ա. Չակարին և Ֆ. Թափզադե-Հեսարին հարկաբյուջետային քաղաքականության և եկամտի անհավասարության միջև կապին վերաբերող իրենց հետազոտությունում օգտագործում են Բայեսյան մոդելի միջինացման միջոցով վերլուծությունը [16]: Հեղինակներն

օգտագործել են մի քանի մեթոդներ՝ մոդելի անորոշությունը անհավասարության աճի մոդելում ներառելու համար: Վերջիններս վերլուծում են պանելային տվյալները՝ 2000-2015 թթ. ՏՀԶԿ 37 երկրներում եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության դերը ուսումնասիրելու համար: Հարկաբյուջետային քաղաքականությունը ծառայում է որպես վերաբաշխման գործիք կամ ավելի բարձր եկամուտ ունեցողներից ավելի ցածր եկամուտ ունեցողներին եկամուտ փոխանցելու միջոց և համարվում է եկամուտների հավասարությունը խթանելու մեխանիզմ: Հեղինակները հիմնավորում են, որ երեք փոփոխականներ՝ տնտեսական աճը, հարկաբյուջետային քաղաքականությունը և քաղաքային բնակչությունը էական ազդեցություն ունեն եկամուտների անհավասարության վրա: Հարկաբյուջետային քաղաքականության հետ կապված գործակիցները զգալի բացասական կապ ունեն եկամուտների անհավասարության հետ. հարկաբյուջետային քաղաքականությունը միջինը 22%-ով նվազեցնում է եկամուտների անհավասարությունը:

Ա. Մ. Վյուն անդրադառնում է Չինաստանի հանրային հատվածի «հավասար վարձատրության» քաղաքականության և, ավելի լայն համատեքստում եկամուտների բաշխմանը [8]: Ըստ հեղինակի, հավասար վարձատրության քաղաքականության ստեղծումն ու զարգացումը արտացոլում են Չինաստանում հարստության բաշխման խթանման հետ կապված բարդությունն ու մարտահրավերները: Թեև Չինաստանի կառավարությունը զգալիորեն կրճատել է պետական և մասնավոր հատվածների միջև աշխատավարձի տարբերությունը, Չինաստանի առանձին տարածքներում վարձատրությունն ավելի հավասար դարձնելու ջանքերը հիմնականում ձախողվել են: Թեև Չինաստանի կառավարությունն ունի ֆինանսական հնարավորություններ պետական աշխատողներին արդար և համարժեք վարձատրելու համար: Այնուամենայնիվ, պետական հատվածում աշխատավարձերի զգալի անհավասարությունները փոխհատուցել են քաղաքացիական ծառայողների վարձատրության բարեփոխման դրական ազդեցությունները: Ընդհանուր առմամբ, սա նշանակում է, որ Չինաստանում ներդաշնակ հասարակության համար ներառական աճը պահանջում է Չինաստանի եկամուտների բաշխման ամբողջ համակարգի մանրակրկիտ և համապարփակ վերանայում:

Մեկ այլ հետազոտությունում Ս. Տեխլը և Կ.Կորեա-Կարոն անդրադառնում են եկամուտների բաշխման էմպիրիկ բնութագրերին Չինաստանում և այլ խոշոր զարգացող շուկայական տնտեսություններում 1980-2013 թթ. [20]: Հեղատոտությունը հիմնված է հարկաբյուջետային

քաղաքականության վերաբաշխման մեխանիզմների ուսումնասիրման վրա: Օգտագործելով գործիքային փոփոխականների տեխնիկան՝ պոտենցիալ էնդոգենությանն անդրադառնալու համար հեղինակները հաստատում են Կուզնեցյան կորի գոյության վարկածը՝ եկամուտների անհավասարության և տնտեսական զարգացման շրջված Մ-աձև փոխհարաբերություն Չինաստանում և BRIC+ երկրների խմբում: Չինաստանի դեպքում էմպիրիկ գնահատումները ցույց են տալիս, որ պետական ծախսերը և հարկումը հակառակ ազդեցություն են ունենում եկամուտների անհավասարության վրա: Պետական ծախսերի նվազման պայմաններում հարկումը բարելավում է եկամուտների բաշխումը: Թեև Չինաստանում հարկաբյուջետային քաղաքականության վերաբաշխիչ ազդեցությունն ավելի ուժեղ է, քան BRIC խմբի երկրներում, այն բավարար չէ այլ ազդեցիկ գործոնների բացասական ազդեցությունը փոխհատուցելու համար:

Վ. Չենը և Տ. Կինկիոն ուսումնասիրել են ֆինանսական զարգացման և եկամուտների անհավասարության միջև դինամիկ կապը, եզրակացնելով, որ ֆինանսական զարգացումը նվազեցնում է անհավասարությունը երկարաժամկետ հեռանկարում, մինչդեռ այն կարող է մեծացնել անհավասարությունը կարճաժամկետ հեռանկարում [23]: Օգտագործելով կարճաժամկետ գործակիցների գնահատականները, նրանք գտնում են, որ ֆինանսական զարգացման բացասական կարճաժամկետ ազդեցությունները կապված են երկրների՝ ճգնաժամների նկատմամբ ավելի խոցելիության ու ավելի վատ կառավարման հետ:

ՏՀԶԿ կողմից իրականացված վերլուծությունում ներկայացվում է տնտեսության թվայնացումից բխող հարկային մարտահրավերներին դիմակայելու լուծումների շրջանակը, BEPS (Base Erosion and Profit Shifting)-ի նվազագույն չափորոշիչների իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվում զարգացող երկրների մասնակցությանը ներառական շրջանակում կատարող բարեփոխումներին [12]:

Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունում ուշադրության կենտրոնում է գտնվում հարկային այն միջոցների բացահայտումը, որոնք կարող են խթանել եկամուտների մոբիլիզացումը ներառական և բարենպաստ աճի ապահովման համար [1]: Հեղինակները եզրակացնում են, որ երկրներն ունեն բազմաթիվ տարբերակներ՝ բարձրացնելու իրենց հարկային համակարգերի արդյունավետությունը, նվազեցնելու հիմնական հարկային աղավաղումները աճին նպաստելու համար, օգտագործել «ուղղիչ հարկեր»՝ աջակցելու կանաչ տնտեսության վերականգնմանը և

հարմարեցնել հարկային նախագծերը՝ COVID-19 համաճարակից հետո ավելի ու ավելի թվայնացված տնտեսությանը դիմակայելու համար:

ՏՀԶԿ վերլուծաբանների կողմից կատարված մեկ այլ հետազոտությունում վերլուծվում են բարեփոխումները, որոնց արդյունքում փոփոխվում են հարկերի ազդեցությունը տնտեսության ընդհանուր բարգավաճման և տնային տնտեսությունների միջև եկամուտների բաշխման վրա [6]: Հեղինակներն, օգտագործելով 1980-2014 թթ. ՏՀԶԿ 34 երկրների փորձը, գնահատում են հարկային կառուցվածքի փոփոխությունների ազդեցությունը մեկ շնչի հաշվով միջին արտադրանքի երկարաժամկետ մակարդակի և տնային տնտեսությունների միջև տնօրինվող եկամտի բաշխման վրա: Եկամտի կառուցվածքի փոփոխությունը՝ կառավարության չափը հաստատուն պահելով, հակված է բարձրացնել մեկ շնչին ընկնող արտադրանքի երկարաժամկետ մակարդակը, եթե դա կապված է միջին եկամտից ցածր կամ ավելի բարձր աշխատուժի հարկի նվազման, կորպորատիվ հարկերի կրճատման, գույքահարկի ավելացման հետ: Բացարձակ թվերով, տնօրինվող եկամտի բաշխումը շահում է աշխատուժի հարկի չեզոք կրճատումից՝ անկախ նրանից՝ դա վերաբերում է ցածր, թե ցածր միջին եկամուտ ունեցողներին:

Ա. Ասլամի և Մ. Կոնյոյի հետազոտությունում գնահատվում է հարկային կառուցվածքի և երկարաժամկետ եկամտի միջև փոխհարաբերությունները՝ որպես հարկային կառուցվածքի ցուցիչներ օգտագործելով հարկային դրույքաչափերի շարքերը [10]: Իրականացված պանելային վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկային կառուցվածքի և մեկ շնչին բաժին ընկնող երկարաժամկետ եկամտի միջև կապն ամուր ցէ: Անդրադառնալով կարճաժամկետ հեռանկարին՝ հեղինակները բացահայտում են մեկ շնչին ընկնող եկամտի վրա դրական ազդեցություն, երբ անցում է կատարում աշխատանքի և կապիտալի հարկումից դեպի սպառման հարկում:

Աբդուլայիմ Իսիական, Ալեքսանդր Միխայիլովը և Ջովաննի Ռազզոն ներկայացրել են հարկային և հանրային ծախսերի շոկերի ազդեցությունները եկամուտների բաշխման վրա միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում [2]: Հեղինակները եզրահանգում են, որ միջին եկամուտ ունեցող երկրներում կրթության ծախսերը ամենաարդյունավետն են բաշխիչ արդյունքների բարելավման համար, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրներում առողջապահական ծախսերը և հարկային շոկերն ունեն ավելի արտահայտված բաշխիչ ազդեցություն:

Վ. Մակոհոնը ներկայացնում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության կոորդինացման կարևորությունը տնտե-

սական աճի ապահովման համար [14]: Հեղինակը գտնում է, որ վերջիններիս կոորդինացումը հանգեցնում է մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Հոդվածում ընդգծվում է մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի ապահովման համար հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ համակարգման դերը: Հատկապես կարևորվում է կենտրոնական բանկերի դերը՝ որպես կարգավորիչ: Վերլուծվել է նաև պետական բյուջեի ծախսերի դիսանիկան տարբեր տարիներին, վերջիններիս մասնաբաժինը ՀՆԱ-ում, ուսումնասիրվել պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, գնահատվել է տնտեսական աճի վրա հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունը: Չանտեսելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների վրա գնաճի ազդեցություն, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պետական ծախսերի աճը պայմանավորված է հիմնականում տնտեսական անկայունության և գնաճի տեմպի բարձրացման հետ: Կարևոր է բյուջեի հարկային և ոչ հարկային եկամուտների օպտիմալ հարաբերակցության պահպանումը, քանի որ դրանք մեծ ազդեցություն ունեն ֆինանսական կայունության վրա: Հարկաբյուջետային քաղաքականությունը եկամուտների բաշխման և ֆինանսական ներառականության ապահովման կարևոր գործիք է, նպաստում է տնտեսական աճին և սոցիալական արդարությանը: Ներառական աճի համար կարևորվել է տնտեսական բազմաշերտ քաղաքականությունը, որը կօգնի ստեղծել հավասար հնարավորություններ և ապահովել տնտեսական աճի բաշխումը բոլոր խավերին:

Մոհամեդ Տրաորը գնահատել է հարկային քաղաքականության ազդեցությունը ներառական աճի վրա 91 զարգացող երկրներում 1990-2015 թվականների համար [22]: Ըստ վերջինիս կողմից կատարված վերլուծությունների, անձնական եկամտի հարկումը եղել է եկամուտների բաշխման լավագույն գործիքը՝ բերելով ավելի ներառական աճի: Նվազագույն կոռուպցիայի և լավ կամ չափավոր բյուրոկրատական քաղաքականության առկայությունը նպաստում է կորպորատիվ եկամուտների հարկի դրական ազդեցությանը ներառական աճի վրա: Որոշակի շեմից հետո ավելացված արժեքի հարկը դրական է ազդում ներառական աճի վրա: Կորպորատիվ եկամտային հարկը ավելի մեծ ազդեցություն ունի ներառական աճի վրա, եթե երկրներում կան ուժեղ ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք ապահովում են հարկային վարչարարության իրականացումը: Կոռուպցիան և բյուրոկրատական խոչընդոտները նվազեցնում են հարկային քաղաքականության արդյունավետությունը:

OECD երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկային և տրանսֆերտային քաղաքականությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ եկամուտների անհավասարության նվազեցման վրա: Օրինակ՝ Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլ երկրներում հարկային քաղաքականության և տրանսֆերտների միջոցով Ջինիի ինդեքսը նվազել է շուրջ 20%-ով: Տարբեր երկրներում կիրառվող հարկային համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ճիշտ կերպով կազմակերպված և իրականացված հարկային քաղաքականությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ եկամուտների բաշխման վրա: Հարկային քաղաքականությունը և հանրային ծախսերը կարող են զգալիորեն նվազեցնել աղքատությունը և եկամուտների անհավասարությունը:

Ժ. Թերբլանչը, Դ. Լիլը և Հ. Հոլանդերը Հարավային Աֆրիկայի օրինակով կատարված հարկաբյուջետային քաղաքականության և անհավասարության մակարդակի վերաբերյալ հետազոտությունում անդրադարձել են հարկային քաղաքականության ազդեցությանը եկամուտների, ախատավարձի և գույքի բաշխման վրա [21]: Դիտարկվել են ուղղակի հարկերի, տրանսֆերտների շուկի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա: Հեղինակները եզրակացնում են, որ չնայած տրանսֆերտներն ու ուղղակի հարկերը մեծ ազդեցություն ունեն եկամուտների անհավասարության զսպման գործընթացում, այնուամենայնիվ անհրաժեշտ են մակրոտնտեսական քաղաքականության այլ գործիքներ ևս:

Բ. Նյուգենն հարկաբյուջետային քաղաքականության ու անհավասարության հիմնախնդիրներին վերաբերող իր հետազոտությունում անդրադառնում է հարկաբյուջետային քաղաքականության ինստիտուցիոնալ որակի և եկամտային անհավասարության փոխազդեցությանը [17]: Հետազոտությունը կատարվել է 30 զարգացած տնտեսությունների համար՝ 2002-2020 թթ. տվյալներով: Նշվում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը և ինստիտուցիոնալ որակը նվազեցնում են եկամտային անհավասարությունը, բայց դրանց փոխազդեցությունը մեծացնում է այն: Բացի այդ, տնտեսական աճն ու գործազրկությունը մեծացնում են եկամտային անհավասարությունը: Այսինքն բավարար չէ, որ երկրում դիտվի բարձր տնտեսական աճ, այն պետք է նաև հավասարաչափ բաշխվի հասարակության տարբեր խավերի միջև՝ եկամուտների անհավասարությունը մեղմելու համար: Հեղինակի կարծիքով հարկաբյուջետային քաղաքականության տարբեր բաղադրիչները, ինչպիսիք են կառավարական եկամուտներն ու հասարակական ծախսերը, նպաստում են եկամտային անհավասարության նվա-

զեցմանը: Կառավարությունները կարող են օգտագործել այդ քաղաքականությունը՝ ազգային եկամուտները բաշխելու և եկամուտների տարբերությունը նվազեցնելու համար: Բնաստիտուցիոնալ որակը նույնպես նվազեցնում է եկամտային անհավասարությունը: Բարձր ինստիտուցիոնալ որակ ունեցող երկրներում եկամուտների անհավասարությունը ավելի քիչ է: Սա նշանակում է, որ լավ ինստիտուցիոնալ որակը՝ օրենքների վերահսկումը, կոռուպցիայի նվազեցումը և քաղաքական կայունությունը, նպաստում են եկամուտների ավելի հավասար բաշխմանը: Թեև հարկաբյուջետային քաղաքականությունն ու ինստիտուցիոնալ որակը առանձին-առանձին նվազեցնում են եկամուտների անհավասարությունը, դրանց փոխազդեցությունը հակասականորեն ավելացնում է այն: Սա կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ որոշ դեպքերում ինստիտուցիոնալ կարգավորումները կարող են խոչընդոտել արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը: Տնտեսական աճի ընթացքում ստեղծված բարիքները հաճախ անհավասար են բաշխվում, ինչը հանգեցնում է եկամուտների անհավասարության աճին: Բարձր եկամուտ ունեցողները հաճախ ավելի շատ են օգտվում տնտեսական աճից, քան ցածր եկամուտ ունեցողները:

Չարգացող երկրներում եկամուտների անհավասարության և անորոշության պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության դերին վերաբերող հոդվածում Լեյենգ Քեբայուն և Սթեֆան Չուին անորոշությունը չափելու համար օգտագործել են մի քանի ինդեքսներ՝ ներառյալ «Աշխարհի անորոշության ինդեքսը» (World Uncertainty Index - WUI), «Տնտեսական քաղաքականության անորոշության ինդեքսը» (Economic Policy Uncertainty - EPU) և «Առևտրային քաղաքականության անորոշության ինդեքսը» (Trade Policy Uncertainty - TPU) [13]: Այս ինդեքսները թույլ են տալիս վերլուծել և համեմատել տարբեր երկրների և ժամանակահատվածների անորոշության մակարդակը՝ տնտեսական ակտիվության և եկամուտների անհավասարության վրա դրանց ազդեցությունը գնահատելու համար: Հոդվածում "անորոշություն" հասկացությունը վերաբերում է տնտեսության ապագայի նկատմամբ հստակության բացակայությանը, ինչը արտահայտվում է տնտեսական փոփոխականների կանխատեսման դժվարությամբ: Հեղինակները նշում են, որ անորոշությունը կարող է լինել տնտեսական, ֆինանսական կամ քաղաքական բնույթի: Վերլուծության համար կիրառվել են հետևյալ գործոնները և մեթոդաբանությունը: Ջինիի գործակիցը, անորոշությունը, ֆիսկալ դիրքորոշումը, ըստ որի տարբերակվել են երկրներ, որոնք ունեն

ֆիսկալ դեֆիցիտ կամ ավելցուկ: Դիտարկվել են նաև ընդհանուր տնտեսական գործոններ՝ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, պաշտոնական զարգացման օգնությունը (ODA), կրթության մակարդակը: Հեղինակները եկել են այն եզրահանգմանը, որ անորոշությունը մեծացնում է եկամուտների անհավասարությունը զարգացող երկրներում, իսկ ֆիսկալ դեֆիցիտ ունեցող երկրներում անորոշությունը ավելի շատ է մեծացնում եկամուտների անհավասարությունը: Ֆիսկալ ավելցուկ ունեցող երկրներում անորոշությունը ավելի քիչ է ազդում եկամուտների անհավասարության վրա: Բնակչության մեկ շնչի եկամուտը, պաշտոնական զարգացման օգնությունը և կրթության մակարդակը նույնպես ազդում են եկամուտների անհավասարության վրա: Մեկ շնչի եկամտի բարձրացումը մեծացնում է եկամուտների անհավասարությունը, իսկ պաշտոնական զարգացման օգնության և կրթության

Չուկվունոնատ Չոզեֆ Նոսիկեն և Օլուչուկվու Մանդրա Նոսիկե Օջոբորը վերլուծում են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունը տնտեսական անկումներից պաշտպանվելու և մեղմելու գործում, կենտրոնանալով՝ գործազրկության, աղքատության և անհավասարության վրա դրանց ազդեցության մասով [18]: Տնտեսական անկումների ժամանակ կառավարական միջամտությունների և տնտեսական արդյունքների միջև փոխհարաբերությունները վերլուծելու նպատակով կիրառվել են քանակական հետազոտության մեթոդներ: Արդյունքները ցույց են տալիս, որ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները կարևոր դեր ունեն տնտեսությունների կայունացման գործում, հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում անդրադառնում է պահանջարկի կողմին, իսկ դրամավարկային քաղաքականությունը՝ առաջարկի կողմին: Հետազոտությունը ընդգծում է անկումների ժամանակ խոցելի բնակչության վրա բացասական ազդեցությունները մեղմելու համար համակարգված քաղաքական պատասխանների կարևորությունը: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը նաև ընդունում է պետական միջամտությունների սահմանափակումները և կարևորում է հետագա հետազոտությունների անհրաժեշտությունը՝ տնտեսական մարտահրավերներին դիմակայելու հարցում քաղաքական մոտեցումները կատարելագործելու և դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար: Անկումների, տնտեսական ճգնաժամերի ժամանակ ֆիսկալ քաղաքականությունը պետք է միտված լինի պետական ծախսերի մեծացմանը և հարկերի նվազեցմանը, որի արդյունքում կմեծանա տնտեսական ակտիվությունը, իսկ դրամավար-

կային քաղաքականությունը՝ տոկոսադրույքի նվազեցմանը՝ տնտեսվարողների և տնային տնտեսությունների պարտքային բեռի նվազեցման համար:

Մուիզ Ադենիջի Ադեգբենրոն, Էմեկա Օկորո Ակպան գնահատում են ֆիսկալ քաղաքականության և պետական առողջապահական ծախսերի ազդեցությունը եկամուտների անհավասարության և առողջապահական արդյունքների վրա Մահարայի Հարավում Գտնվող Աֆրիկյան Երկրներում (SSA) [4]: Ուսումնասիրությունը ընդգրկում է 2010-2022 թթ. ժամանակաշրջանը՝ օգտագործելով պանելային տվյալներ 12 երկրների վերաբերյալ: Գնահատումը կատարվել է System GMM գնահատման տեխնիկայով: Արդյունքները ցույց են տալիս, որ հարկաբյուջետային քաղաքականության և պետական առողջապահական ծախսերի ինտերակցիան նշանակալի ազդեցություն ունի մինչև հինգ տարեկան մահացության վրա, բայց ոչ այնքան նշանակալի ազդեցություն կյանքի տևողության և եկամուտների անհավասարության վրա: Հարկաբյուջետային քաղաքականության և պետական առողջապահական ծախսերի փոխազդեցությունը ունի բացասական և նշանակալի ազդեցություն մինչև հինգ տարեկանների մահացության վրա: Հարկերի և պետական առողջապահական ծախսերի ազդեցությունը առաջացնում է մահացության նվազում: Կյանքի տևողության վրա հարկաբյուջետային քաղաքականություն և պետական առողջապահական ծախսերի ազդեցությունը չունի նշանակալի դեր: Հարկաբյուջետային քաղաքականության և պետական առողջապահական ծախսերի ազդեցությունը նվազեցնում է եկամուտների անհավասարությունը:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի օրինակով Էմին Էֆեկան Աքթաշը դիտարկում են ֆիսկալ քաղաքականության նպատակներից մեկի՝ եկամուտների արդարացի բաշխման կարևորությունը [7]: Հոդվածում փորձ է արվում պարզել եկամուտների անհավասարության միջանկյալ ազդեցությունը ընդհանուր հարկային եկամուտների և համախառն ազգային ծախսերի վրա, որոնք համարվում են հարկաբյուջետային քաղաքականության գործիքներ: Հետազոտության նպատակ է ձևակերպվել 1990-2019 թթ. ընթացքում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 20 երկրներում տնտեսական աճի վրա եկամուտների անհավասարության և հարկաբյուջետային քաղաքականության գործիքների ազդեցության գնահատումը: Ըստ հետազոտության արդյունքների եկամուտների անհավասարությունն ունի բացասական ազդեցություն տնտեսական աճի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության գործիքների միջանկյալ ազդեցությունը տարբեր է. Մաս-

նավորապես, եկամուտների անհավասարության և ընդհանուր հարկային եկամուտների միջանկյալ ազդեցությունը թուլացնում է բացասական կապը տնտեսական աճի հետ, մինչդեռ համախառն ազգային ծախսերի միջանկյալ ազդեցությունը ուժեղացնում է այս կապը: Համախառն ազգային ծախսերն ունեն դրական ազդեցություն տնտեսական աճի վրա: Եկամուտների անհավասարության և համախառն ազգային ծախսերի միջանկյալ ազդեցությունը ուժեղացնում է տնտեսական աճը, իսկ ընդհանուր հարկային եկամուտները ունեն բացասական ազդեցություն վերջինիս վրա: Եկամուտների անհավասարության և ընդհանուր հարկային եկամուտների միջանկյալ ազդեցությունը նվազեցնում է տնտեսական աճը: Մարդկային կապիտալը, կյանքի տևողությունը, օտարերկրյա ներդրումները, և կառավարման որակը դրական ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա: Հետազոտության մեջ «միջանկյալ ազդեցություն» ասելով նկատի ունի այն ազդեցությունը, որը մեկ փոփոխական (միջանկյալ փոփոխական) ունի երկու այլ փոփոխականների փոխհարաբերության վրա: Այս դեպքում, եկամուտների անհավասարությունն ունի միջանկյալ ազդեցություն ֆիսկալ քաղաքականության գործիքների (համախառն ազգային ծախսեր և ընդհանուր հարկային եկամուտներ) և տնտեսական աճի փոխհարաբերության վրա:

### Եզրակացություն

Հետազոտության արդյունքները հիմք են եզրակացնելու, որ հարկաբյուջետային քաղաքականության ներառականությունը տարբեր հետազոտություններում դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, տարբեր են նաև գնահատման մեթոդաբանական մոտեցումները: Մեթոդների և գործոնների ընտրությունը հիմնականում կախված է երկրի տնտեսական զարգացման մակարդակից, երկրների խմբից, տեղեկատվության հասանելիության աստիճանից, ինչպես նաև առանձին հետազոտողների կողմից իրենց առաջ դրված հիմնական խնդիրներից կամ դրանց ուղղվածությունից:

Դիտարկված հետազոտություններում բացի ցուցանիշների շարժընթացի դիտարկումից ու վերլուծությունից, կիրառվում են ռեգրեսիոն վերլուծության մեթոդներ, պանելային ռեգրեսիա տարբեր երկրների կամ ցուցանիշների խմբերի համար: Ռեգրեսիոն մեթոդներից հիմնականում կիրառվում է կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ (Structural Vector Autoregressions (SVAR)) մեթոդը:

Ժամանակային շարքերի առանձին խմբերի վերլուծության համար կիրառվում են ավտոռեգրեսիվ բաշխված լագերի (Autoregressive Distributed Lag (ARDL)) և միջին ցուցանիշների



խմբերի վերլուծության մոդելներ՝ Pooled mean group (PMG) estimator, Bayesian Model Averaging Analysis և այլն:

Վերլուծության համար յուրահատուկ մոտեցումներ են Ռամսեյի խնդրի լուծումը (Ramsey Problem), ինչպես նաև Կուզնեցյան կորի կառուցում և ուսումնասիրումը:

Անհավասարությունը բնութագրող հիմնական գործոններ են դիտարկվել է Ջինի գործակիցը, եկամուտների անհավասարությունը տարբեր խմբերի կամ տարածաշրջանների միջև, աղքատ և հարուստ գործակալների եկամուտներ հարաբերակցությունը և այլն: Որպես անկախ փոփոխականներ դիտարկվել են ինչպես առանձին մակրոտնտեսական գործոններ, այնպես էլ առանձին ինդեքսներ: Դիտարկված վերլուծություններում տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշներն են ՀՆԱ աճ, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, իսկ որպես մակրոտնտեսական մակարդակի գործոններ դիտարկվել են գնաճը, գործազրկությունը, տրանսֆերտները, խնայողությունները, արտահանման և ներմուծման կշիռը ՀՆԱ մեջ, առևտրի բացությունը, արտաքին առևտուրը, մադկային կապիտալը, բնակչության աճը և այլն:

Առանձին հետազոտություններում որպես գործոններ դիտարկվել են ինստիտուտների և քաղաքական համակարգի որակը բնութագրող ինդեքսներ, ինչպես նաև անորոշությունը բնութագրող այնպիսի ինդեքսներ, ինչպիսիք են՝ World Uncertainty Index - WUI, Economic Policy Uncertainty – EPU, Trade Policy Uncertainty – TPU և այլն:

Եկամտային քաղաքականությունը բնութագրող գործոնների շրջանակում ընդգրկված են ուղղակի և անուղղակի հարկերը, կապիտալի հարկը, եկամտի հարկը, սպառման հարկերը, հարկերի առանձին տեսակների և ՀՆԱ հարաբերությունը, հարկային եկամուտներ/ՀՆԱ, հարկերի և տնօրինվող եկամտի հարաբերությունը, հարկային քաղաքականությունը բնութագրող այլ ցուցանիշներ:

Պետական ծախսերի շրջանակը բնութագրող գործոնները հիմնականում դիտարկվել են պետական ծախսերի գործառնական դասակարգման շրջանակներում, պետական ծախսեր ըստ առանձին ուղղությունների, հանրային ծախսեր կրթության, առողջապահության ոլորտում և այլն:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Abdelkader K. and R. de Mooij, forthcoming 2020, “Tax Policy and Inclusive Growth, IMF Working Paper” (Washington: International Monetary Fund). <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2020/12/04/Tax-Policy-and-Inclusive-Growth-49902>

2. Abdulaleem Isiaka, Alexander Mihailov, Giovanni Razzu et al. Fiscal Policy and Inequality in Middle- and High-Income Countries: Redistributive Effects of Tax and Spending Shocks, 26 June 2023, PREPRINT (Version 1) available at Research Square [<https://doi.org/10.21203/rs.3.rs-3081542/v1>]
3. Addressing Fiscal Challenges to Foster an Inclusive Growth, The World Bank, 2022 Comoros Public Expenditure Review,
4. Adegbenro, Muiz, and Emeka Akpa. “Fiscal Policy Measures, Income Inequality and Health Outcomes of Countries in SSA.” *Acta Universitatis Danubius Oeconomica* 19 (October 2023): 55–76.
5. Ahmet Eren Yildirim & Mete Dibo, 2021. "The impacts of income inequality on the gross domestic product under direct taxation: evidence from emerging market economies," *International Journal of Social Economics*, Emerald Group Publishing Limited, vol. 48(10), pages 1516-1541, July.
6. Akgun, O., B. Cournède and J. Fournier (2017), “The effects of the tax mix on inequality and growth”, OECD Economics Department Working Papers, No. 1447, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/c57eaa14-en>.
7. Aktaş, Emin. “The Moderating Effect of Income Inequality in Fiscal Policy Efficiency: The Case of Central and Eastern Europe.” *Acta Oeconomica* 74 (March 2024): 65–83. <https://doi.org/10.1556/032.2024.00003>.
8. Alfred M. Wu (2012) The Equal Pay Policy in China: A Preliminary Assessment, *Journal of Comparative Asian Development*, 11:2, 248-270, DOI:10.1080/15339114.2012.720129
9. Alves, José, and José Coelho. “Two-Way Relationship between Inequality and Growth within the Fiscal Policy Channel: An Empirical Assessment for European Countries.” *Journal of Economic Studies*, April 2024. <https://doi.org/10.1108/JES-09-2023-0479>.
10. Aslam A., and M. Coelho. 2020. “Alternative Minimum Taxes.” IMF Working Paper (forthcoming), International Monetary Fund, Washington DC. <https://doi.org/10.1007/s10797-015-9364-1>
11. Estrada, Gemma, Sang-Hyop Lee, and Donghyun Park. “Fiscal Policy for Inclusive Growth: An Overview.” SSRN Electronic Journal, January 2014. <https://doi.org/10.2139/ssrn.2558932>.
12. Inclusive Framework on BEPS: Progress Report September 2022-September 2023, OECD/G20 <https://www.oecd.org/tax/beps/oecd-g20-inclusive-framework-on-beps-progress-report-september-2022-september-2023.htm>
13. Kebalo, Léleng, and Stephane Zouri. “Income Inequality in Developing Countries: Fiscal Policy’s Role amid Uncertainty.” *Journal of Applied Economics* 27 (February 2024): 2316969. <https://doi.org/10.1080/15140326.2024.2316969>.
14. Makohon, Valentyna. “Coordination of Fiscal and Monetary Policy in Ukraine.” *Scientia Fructuosa* 154 (April 2024): 4–19. [https://doi.org/10.31617/1.2024\(154\)01](https://doi.org/10.31617/1.2024(154)01).
15. Muinelo-Gallo L. and Roca Sagalés, O. 2013, ‘Joint Determinants of Fiscal Policy, Income Inequality and

- Economic Growth', Economic Modelling, vol. 30 (1), pp. 814-824. DOI:10.1016/j.econmod.2012.11.009
16. Musibau Hamed, Abdulrasheed Zakari, and Farhad Taghizadeh-Hesary. "Exploring the Fiscal Policy—Income Inequality Relationship with Bayesian Model Averaging Analysis." *Economic Change and Restructuring* 57 (February 2024). <https://doi.org/10.1007/s10644-024-09577-1>.
  17. Nguyen, Van Bon. "FROM FISCAL POLICY TO INCOME INEQUALITY IN ADVANCED ECONOMIES: DOES INSTITUTIONAL QUALITY HINDER?" 26 (April 2023): 165–84.
  18. Nosike, Rev Chukwunonso, and Nosike Oluchukwu. "Effects of Government Policies on Recessions: Fiscal and Monetary Policy Impact on Unemployment, Poverty, and Inequality." 10 (March 2024): 2504–8694.
  19. Saith Walberti, Joanna Giorgios, and Leonardo de mattos. "Fiscal Policy and Income Inequality in a Model with Heterogeneous Agents," 2016. [https://www.researchgate.net/publication/324546370\\_Fiscal\\_Policy\\_and\\_Income\\_Inequality\\_in\\_a\\_model\\_with\\_Heterogeneous\\_Agents#fullTextFileContent](https://www.researchgate.net/publication/324546370_Fiscal_Policy_and_Income_Inequality_in_a_model_with_Heterogeneous_Agents#fullTextFileContent)
  20. Serhan Cevik & Carolina Correa-Caro (2019): Growing (un)equal: fiscal policy and income inequality in China and BRIC+, *Journal of the Asia Pacific Economy*, DOI: 10.1080/13547860.2019.1699985
  21. Terblanche, Jeanne, Dawid van Lill, and Hylton Hollander. "Fiscal Policy and Dimensions of Inequality in South Africa: A Time-varying Coefficient Approach." *South African Journal of Economics* 92 (January 2024): 105–19. <https://doi.org/10.1111/saje.12369>.
  22. Traore, Mohamed. "Fiscal Policy, Income Inequality and Inclusive Growth in Developing countries," 2019. [https://www.researchgate.net/publication/336371299\\_Fiscal\\_policy\\_income\\_inequality\\_and\\_inclusive\\_growth\\_in\\_developing\\_countries](https://www.researchgate.net/publication/336371299_Fiscal_policy_income_inequality_and_inclusive_growth_in_developing_countries)
  23. Wang Chen & Takuji Kinkyo (2016) Financial Development and Income Inequality: Long-Run Relationship and Short-Run Heterogeneity, *Emerging Markets Finance and Trade*, 52:3, 733-742, DOI: 10.1080/1540496X.2016.1116281

*Сдана/Հանձնվել է՝ 08.07.2024*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 18.07.2024*

*Принята/Ընդունվել է՝ 25.07.2024*